Ոստիկանության և ազատությունից զրկման հարցերով համագործակցություն

Ոստիկանության և ազատությունից զրկման հարցերով համագործակցության (ՈԱԶՀՀ) ստորաբաժանումը (նախկինում՝ Քրեական իրավունքի հարցերով համագործակցության ստորաբաժանում) աջակցում է անդամ պետություններին իրենց ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում ինտեգրել Եվրոպայի խորհրդի չափորոշիչները, նաև քայլեր ձեռնարկել Եվրոպայի խորհրդի մշտադիտարկում իրականացնող մարմիններից ստացած առաջարկությունների ուղղությամբ, որոնցից առավել ուշագրավներն են Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնակատարը և Խորհրդարանական վեհաժողովը

ՈԱԶՀՀ-ն իրականացնում է ոստիկանության, պրոբացիայի, քրեակատարողական հիմնարկների և ազատությունից զրկված անձանց պահելու այլ փակ հաստատությունների ոլորտներին վերաբերող բազմաթիվ ծրագրեր: ՈԱԶՀՀ-ն ամենաակնառու կարիքները վերհանելու և դրանց լուծում տալու, ինչպես նաև համապատասխան տեխնիկական աջակցության միջոցով շահառուներին փոփոխության հասցնելու նպատակով աշխատում է անմիջապես ներպետական իշխանությունների և միջազգային կազմակերպությունների հետ

Մեթոդաբանություն

- Քրեակատարողական հիմնարկների, պրոբացիայի և ոստիկանության համակարգերի բարեփոխումներին աջակցող քաղաքականությանը վերաբերող փաստաթղթեր
- Օրենսդրական գործընթացներին աջակցություն (խորհրդատվություն, քննարկումներ, նախագծերի մշակում)
- Քրեակատարողական հիմնարկների, պրոբացիայի և ոստիկանության աշխատակազմերի կարողությունների զարգացում
- Իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեություն

Աշխատանքի հիմնական շրջանակներ

- իրավապահ
- քրեակատարողական
- պրոբացիայի համակարգեր

ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոր մարտահրավերները վերլուծելու, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակման և գործընկերության ամրապնդման նպատակով ոստիկանության հարցերով ամենամյա համաժողով

Առաջիկայում գործարկվելիք ոստիկանության նոր ցանց

Ներպետական իշխանությունների հետ բազմակողմանի և երկկողմ համագործակցության ծրագրեր և գործողություններ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈԱԶՀՀ-ն աջակցում է երկրներին ազատազրկված անձանց մարդու իրավունքների ամրապնդման, առողջության՝ այդ թվում քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության պահպանման ապահովման, կալանավորված անձանց բուժման ծրագրերի, բռնի ծայրահեղական ազատազրկված անձանց կայուն վերականգնման, քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի համագործակցության, քրեակատարողական հիմնարկներում ռադիկալիզացիայի խնդրի դեմ պայքարի կարողությունների ամրապնդման, դինամիկ անվտանգության ներդրման, անչափահասների արդարադատության համակարգի բարելավման և քրեակատարողական համակարգի աշխատակիցների կրթության/ վերապատրաստումների հարցերում

ՊՐՈԲԱՑԻԱ

ՈԱԶՀՀ-ն աջակցում է երկրներին գործնականում անհրաժեշտ օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործառնական շրջանակներ ապահովելու միջոցով լիովին կայացնել պրոբացիայի հայեցակարգը

@CPDL_CoE

www.coe.int/cpdl

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE